# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.12.2021թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**

**թիվ ՍՑ-ՆԳ-2021/335**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.12.2021թ. թիվ 26/26-1/20946-2021 գրությամբ «Պ.Ռ.Ա.Կ.» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 14.12.2021թ. գրության հիման վրա, 20.12.2021թ. թիվ 26/26-1/20946-2021 գրությամբ նախաձեռնել է «Պ.Ռ.Ա.Կ.» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

**2. <u>«Պ.Ռ.Ա.Կ.» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Պ.Ռ.Ա.Կ.» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Պ.Ռ.Ա.Կ.» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/335 ընթացակարգի շրջանակներում 23.12.2021թ. ժամը 10:05-ին և 29.12.2021թ. ժամը 09:12-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**3. <u>«ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 14.12.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կարիքների համար Սննդամթերքի ձեռքբերման համար կազմակերպված ԱՔ-Թ1Մ-ԳՀԱՊՁԲ-21/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակից «Պ.Ռ.Ա.Կ.» ՍՊԸ-ի հետ կնքվել է սննդամթերքի մատակարարման պայմանագիր, որը մատակարարումը կատարել է ոչ պատշաճ և ուշացումներով, ինչի հետևանքով մանկապարտեզը մնացել է առանց սննդի: Ուստի «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ մասի ա) պարբերությունը՝ «խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը», որոշել է Պայմանագիրը չկատարված մասով մասնակի միակողմանի լուծել:

Քանի որ ի հայտ են եկել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերը, ուստի Ձեզ ենք ներկայացնում «Պ.Ռ.Ա.Կ.» ՍՊԸ-ի տվյալները, ԱՔ-Թ1Մ-ԳՀԱՊՁԲ-21/1 ծածկագրով գնման ընթացակարգի արձանագրությունները, պայմանագիր կնքելու առաջարկը, երկկողմանի հաստատված պայմանագիրը, մատակարարին ուղարկված գրությունները, ինչպես նաև Պայմանագիրը չկատարված մասով մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/335 ընթացակարգի շրջանակներում 23.12.2021թ. ժամը 10:05-ին և 29.12.2021թ. ժամը 09:12-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**4. <u>ՍՑ-ՆԳ-2021/335 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ՆԳ-2021/335 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի և «Պ.Ռ.Ա.Կ.» ՍՊԸ-ի միջև 10.03.2021թ. կնքվել է թիվ «ԱՔ-Թ1Մ-ԳՀԱՊՁԲ-21/1-3» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրին կից հավելված N 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, 10-րդ և 34-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել յուրաքանչյուր ամսվա առաջին աշխատանքային օրը սկսած 01.04.2021թ.-ից:

3. «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը «Պ.Ռ.Ա.Կ.» ՍՊԸ-ին ուղղված ծանուցմամբ՝ պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին, հայտնել է հետևյալը.

««ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի (այսուհետ՝ Գնորդ) և «Պ.Ռ.Ա.Կ.» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 10.03.2021թ. կնքված ԱՔ-Թ1Մ-ԳՀԱՊՁԲ-20/1-3 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Վաճառողը պետք է մատակարարեր Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված ապրանքները, սակայն Վաճառողը Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մատակարարումները կատարել է ուշացումներով, իսկ դեկտեմբեր ամսվանից սկսած մատակարարում չի կատարել:

Բազմիցս դիմել ենք Վաճառողին թե՛ գրությամբ և թե՛ բանավոր ապրանքի

մատակարարումը պատշաճ և ժամանակին կատարելու համար, սակայն ուշացումները շարունակվել են: Այս պահի դրությամբ մանկապարտեզը բնականոն աշխատանքը շարունակելու համար սնունդ չունի:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը հարկադրված է 2021թ. դեկտեմբերի 7-ից Պայմանագիրը չկատարած մասով մասնակի միակողմանի լուծել:

Միաժամանակ հայտնում ենք, որ Վաճառողից կգանձվի պայմանագրի ապահովում՝ համապատասխանաբար 46186 ՀՀ դրամ, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի համաձայն «Պ.Ռ.Ա.Կ.» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, պարտավորվում ենք ներկայացնել լիազորված մարմին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով»:

4. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 07.12.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

**5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 20.12.2021թ. թիվ 26/26-1/20946-2021 գրությունը, «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 14.12.2021թ. գրությունը՝ կից փաստաթղթերով և գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի և «Պ.Ռ.Ա.Կ.» ՍՊԸ-ի միջև 10.03.2021թ. կնքվել է թիվ «ԱՔ-Թ1Մ-ԳՀԱՊՁԲ-21/1-3» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1

հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրին կից հավելված N 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, 10-րդ և 34-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել յուրաքանչյուր ամսվա առաջին աշխատանքային օրը սկսած 01.04.2021թ.-ից:

«ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը «Պ.Ռ.Ա.Կ.» ՍՊԸ-ին ուղղված ծանուցմամբ՝ պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին, հայտնել է հետևյալը.

««ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի (այսուհետ՝ Գնորդ) և «Պ.Ռ.Ա.Կ.» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 10.03.2021թ. կնքված ԱՔ-Թ1Մ-ԳՀԱՊՁԲ-20/1-3 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Վաճառողը պետք է մատակարարեր Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված ապրանքները, սակայն Վաճառողը Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մատակարարումները կատարել է ուշացումներով, իսկ դեկտեմբեր ամսվանից սկսած մատակարարում չի կատարել:

Բազմիցս դիմել ենք Վաճառողին թե՛ գրությամբ և թե՛ բանավոր ապրանքի մատակարարումը պատշաճ և ժամանակին կատարելու համար, սակայն ուշացումները շարունակվել են: Այս պահի դրությամբ մանկապարտեզը բնականոն աշխատանքը շարունակելու համար սնունդ չունի:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը հարկադրված է 2021թ. դեկտեմբերի 7-ից Պայմանագիրը չկատարած մասով մասնակի միակողմանի լուծել:

Միաժամանակ հայտնում ենք, որ Վաճառողից կգանձվի պայմանագրի ապահովում՝ համապատասխանաբար 46186 ՀՀ դրամ, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի համաձայն «Պ.Ռ.Ա.Կ.» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, պարտավորվում ենք ներկայացնել լիազորված մարմին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 07.12.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են ***<u>3 օրից ավելի</u>***:

Պայմանագրի 6.6 կետի համաձայն՝ Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այսպիսով՝ Պայմանագրին կից հավելված N 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, 10-րդ և 34-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել յուրաքանչյուր ամսվա առաջին աշխատանքային օրը սկսած 01.04.2021թ.-ից, ինչպես նաև Պայմանագրի 2.1.7 կետով սահմանվել է, որ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը, որպիսի խախտում է, համաձայն Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի բ) պարբերության, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են ***<u>3 օրից ավելի</u>***:

Պատվիրատուն Վաճառողին ուղղված ծանուցմամբ հայտնել է, որ ***<u>Վաճառողի կողմից դեկտեմբեր ամսվանից սկսած մատակարարում չի կատարվել և 07.12.2021թ. մասնակի լուծել է Պայմանագիրը, որի վերաբերյալ ծանուցումը 07.12.2021թ. հրապարակել է Տեղեկագրում:</u>***

Վերը շարադրված փաստական հանգամանքների ուժով՝ արձանագրում եմ, որ «Պ.Ռ.Ա.Կ» ՍՊԸ-ն խախտել է իր և «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի միջև 10.03.2021թ. կնքված Պայմանագրի 10-րդ և 34-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետը, այն է՝ 07.12.2021թ. դրությամբ չի կատարել Պայմանագրին կից հավելված N 1-ով՝

տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված 01 դեկտեմբերին (տվյալ ամսվա առաջին աշխատանքային օր) ենթակա ապրանքների մատակարարումները, ինչն արդեն իսկ բավարար հիմք է փաստելու, որ Ընկերության կողմից թույլ է տրվել Պայմանագրի էական պայմանների խախտում, որպիսի պայմաններում Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծումն իրավաչափ է:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են «Պ.Ռ.Ա.Կ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.12.2021թ. թիվ 26/26-1/20946-2021 գրությամբ «Պ.Ռ.Ա.Կ.» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Պ.Ռ.Ա.Կ.» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված**
**բողոքներ քննող անձ՝** **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**